

Այսպիսով, ճշտելով եւ ցուցակից հանելով բոլոր ավելորդ տվյալները, ինչպես նաեւ վերջնականապես չճշտված տվյալները, ստացանք սպանված հայերի հետեւյալ ոչ լրիվ (առանց չճշտված անունների) ցուցակը.



1. Առաքելյան Արտաշ
2. Առուշանյան Ռազմելա
3. Առուշանյան Վլադիմիր
4. Ավագյան Լույս
5. Ավագյան Յուրա
6. Ավանեսյան Ալբերտ
7. Ավանեսյան Վալերի
8. Արամյան Արթուր
9. Արամյան Արմո
10. Բաբայան Արշակ
11. Բաբայան Ելենա
12. Գրիգորյան Էմմա
13. Դանիելյան Նիկոլայ
14. Դանիելյան Սեդա
15. Թովմասյան Ռաֆիկ
16. Համբարձումյան Միքայել
17. Դամբարյան Ալեքսանդր
18. Մարտիրոսյան Գարրի
19. Մելքունյան Էդուարդ
20. Մելքունյան Իգոր
21. Մելքունյան Իրինա
22. Մելքունյան Ռայիսա
23. Մելքունյան Սողոմոն
24. Մելքունյան Փիրուզ
25. Մեհտիսեա Թամարա
26. Մովսեսովա Չերսիլիա
27. Սահյան Արուսյակ
28. Սարգսյան Շահեն
29. Սաֆարյան Լավրենտի
30. Վարդանյան Նատալյա
31. Տրդատով (Տրդատյան) Գաբրիել

Իսկ այժմ, հաշվի առնելով հանրապետության դարոցական դասագրքերում տեղ գտած պաշտոնական կեղծիքը՝ «ըստ պաշտոնական տվյալների, Սունգալիթում սպանվել է 27 հայ», ցանկանում են ընթերցողների (հատկապես՝ դասագրքերի հեղինակների) ուշադրությունը հրավիրել պաշտոնական հաղորդագրությունների վրա: Հիշենք ՏԱՄՍ-ի հաղորդագրությունները Սունգալիթում սպանվածների մասին «Իզվեստիա» թերթում:

1988 թ. մարտի 3-ին. «Հաստատված է, որ հանցավոր գործողություններից զոհվել է 32 մարդ»:

1988 թ. մարտի 6-ին. «Նրանց ձեռքով սպանվել է 31 մարդ»:

1988 թ. մարտի 26-ին. «Հաստատված է, որ հանցավոր գործողություններից զոհվել է 32 մարդ»:

Հիշենք, որ մարտի 3-ից 4-ի գիշերը Բաքվի հիվանդանոցում ծանր վնասվածքներից մահացել է

Տրդատով (Տրդատյան) Գաբրիելը, որն այնտեղ էր հասցվել Սունգալիթից՝ իր տանը հանցագործ խմբի դեմ պայքարում վիրավորվելուց հետո: Դա նշանակում է, որ մարտի 3-ի հաղորդագրության 32-ի (6 ադրբեջանցի եւ 26 հայ) մեջ Տրդատով Գաբրիելը չէր կարող ընդգրկված լինել եւ հաջորդ՝ մարտի 6-ի հաղորդագրության մեջ զոհերի թիվը նախորդ հայտնած թվից մեծ պետք է լիներ, այլ ոչ թե 31: Ըստ երեւութին, ԽՍՀՄ դատախազության քննչական հատուկ խումբը, որը վարում էր սունգալիթյան գործի հետաքննությունը, «հատուկ» առաջադրանք էր կատարում:

Հիշենք «Դիրքորոշում» («Պոզիցիա») հեռուստահաղորդման մեջ Բորովիկի խոսքը, թե «սկզբում հայտնել են 31, հետո եւս մեկը մահացավ», ԽՍՀՄ գլխավոր դատախազի տեղակալ Կատուսելը պատասխանեց. «Այո, հիվանդանոցում մահացավ մի կին եւ դարձավ 32»: Նրանցից 26-ը՝ հայ, իսկ 6-ը՝ ադրբեջանցի»: Քանի որ մեզ հայտնի ցուցակում նշված կանանցից միայն Էմմա Գրիգորյանն է մահացել (ավելի ճիշտ՝ բժիշկների ձեռքով սպանվել) հիվանդանոցում եւ այն էլ՝ փետրվարի 29-ին, ապա կարելի է ենթադրել, որ Կատուսելը նկատի ուներ բոլորովին ուրիշ կնոջ, որը չկա մեր ցուցակում: Հիշենք եւս մեկին՝ Ռազմելա Առուշանյանին, որը նույնպես չկար եւ չէր կարող լինել պաշտոնական թվի՝ 26-ի մեջ, որովհետեւ նա հայտարարված էր անհայտ կորած: Ահա այդ հայտարարության տեքստը. «28.02.88 թ. Ժ. 24-ի մոտ խողովակազւանման գործարանի կենտրոնական մուտքից դուրս է եկել քաղ. Ռազմելա Աթանեսի Առուշանյանը, 1939 թ. ծնված, անհայտ կորել է: Վերջին անգամ նրան տեսել են մերկ խժոժություններ իրականացնող անձանց խմբի մեջ, հաղադրության փողոցի վրա երկաթուղու անցման շրջանում»: Հայտարարությունը ստորագրել են քննիչներ Ս. Ե. Պավլովսկին եւ Ա. Ն. Կոզլովսկին:

Կարելի է ենթադրել, որ պաշտոնական հայտարարված «26»-ի մեջ հաշվի չէր առնված նաեւ Լավրենտի Լիպարիտի Սաֆարյանը, մոտ 35 տարեկան, որն ապրում էր Բաքվում եւ աշխատում Սունգալիթում: Նրան սպանել են ջարդերի օրերին աշխատանքի վայրում:

Նշված եւ էլի մի շարք ուրիշ փաստերի առկայության պայմաններում մենք չենք կարող հավատալ նաեւ այն պաշտոնական հայտարարություններին, որ զոհվածների մեջ երեխաներ չկան: Մենք ավելի համոզիչ հիմքեր ունենք հավատալու ռուս գիտնականներին, որոնք գրել են. «Մենք գիտենք, որ տուժել են եւ երեխաներ, եւ կանայք» («Իզվեստիա», 25.03.88): Ահա այդ համոզիչ հիմքեր հանդիսացող վկայություններից մի քանիսը:

Ըստ ականատեսների վկայությունների, մի քանի ամսական մի ծծկեր երեխա մահացել է Ս. Վուրդունի անվան ակումբի շենքում, ուր խորհրդային զորքերն էվակուացրել էին Սունգալիթի հայ բնակչության մի մասին: Երեխան մահացել է քաղաքացի Ջավեն Բադաջանյանի ձեռքերի վրա: Մարմնի վրա վերքեր ու վնասվածքներ չեն եղել, սակայն սկզբնական շրջանում տիրող քաոսը, հակասամիտարական, բուժօգնության իսպառ բացակայությունը թույլ են տալիս երեխային համարել սունգալիթյան ողբերգության զոհ: Իհարկե, այս փաստի վերաբերյալ լրացուցիչ հարցեր են առաջացել, որոնց պատասխանն առայժմ մեզ անհայտ է: Իսկ ովքե՞ր են երեխայի ծնողները, արդյո՞ք նրանք էլ չեն սպանվել: Երեխայի մահվան մասին այս տեղեկությունը հրապարակվել է 1989 եւ 1990 թթ. հարյուր հազարավոր

տպաքանակով տպագրված «Сумгаит... геноцид... гласность» գրքում, եւ ոչ մի պաշտոնական հերքում այդ փաստի վերաբերյալ չի եղել: Իսկ ահա Արտեմ Գրիգորյանի ընտանիքի անդամների սպանության մասին տեղեկության պաշտոնական «հերքումը» չի ուշացել. Կատասեւի ներկայացրած այդ «հերքումը» հրապարակվել է «Իզվեստիա» թերթում 1988 թ. օգոստոսի 20-ին, որի պատասխան հերքումը մենք ներկայացրել ենք վերը նշված «Сумгаит... геноцид... гласность» գրքում:

Սումգայիթում սպանված Ա. Ղամբարյանի որդին՝ Ռ. Ղամբարյանը վկայում է. «Փետրվարի 29-ի լույս մարտի 1-ի գիշերը, երբ հորս դիակը տեղափոխել են Սումգայիթի դիարան, մենք՝ ես, եղբայրս եւ մեզ ուղեկցող դատախազության երկու աշխատակիցներ, այլ դիակների մեջ տեսել ենք մոտ 10-12 տարեկան երեխայի այրված դիակ» (տես՝ «Сумгаит... геноцид... гласность», 1989, էջ 54):

Ազգությամբ լեհուհի Լիդիա Վլադիմիրի Ռիսովան պատմում է. «Իմ աղջիկը Օլյան, տեսել է, թե ինչպես մի երեխայի նետել են խարույկի մեջ: Նա վազելով տուն է եկել արցունքոտ աչքերով»:

Կան նաեւ տեղեկություններ Սումգայիթի ծննդատան սպանությունների մասին: Այդ մասին մենք հրապարակել ենք Իրինա Միքայելի Աղասյանի եւ Հովհաննես Վլադիմիրի Խաչատրյանի պատմած տվյալները (տես՝ «Сумгаит... геноцид... гласность», էջ 54-55): Ասվածին ավելացնենք եւս երկու վկայություն, որոնց հեղինակների տվյալները մեզ հիմք են տալիս պնդելու, որ Սումգայիթում սպանվել են 100-ից ավելի հայեր:

Գալինա (Գեղեցիկ) Բախշի Քոչարյանը, որը Սումգայիթի N 11 ԲԾԳ-ի նախկին պետն էր, եւ որի սկեսրոջը՝ Փիրուզա Սելբումյանին սպանել են, պատմում է. «Երբ մտա դիարան, տեսա ահագին շատ դիակներ: Ո՛չ 32 եւ ո՛չ էլ 40, այլ շատ ավելին: Ինձ ցույց տվեցին ցուցակ, որպեսզի ես ճանաչեմ մարդկանց, որովհետեւ այստեղ ապրում են վաղուց եւ ճանաչում են շատերին: Ցուցակը մի քանի էջի վրա էր: Ցուցակում կրկնակի համարակալում կար: Շատ լավ հիշում եմ սկեսուրս 155-րդ համարն էր, իսկ դիմացը՝ 31»:

Կարծում՝ այստեղ երկու կարծիք լինել չի կարող. դա սպանվածների իրական ցուցակն էր, որի մեջ Գ. Քոչարյանի սկեսուր Փ. Սելբումյանը 155-րդ համարն էր, իսկ երկրորդ համարակալումը համապատասխանել է այն դիակներին, որոնց հարազատները եղել էին դիարանում եւ ճանաչել են հարազատներին: Ըստ երեւութի, հայտարարված 32 թիվն էլ հենց համապատասխանել է ճանաչված դիակների թվին:


Դիակների քանակի վերաբերյալ եռանիշ թիվ է հայտնել նաեւ սպանված Լուլա Ավագյանի հայրը՝ Պավել Մանվելյանը, որն ասել է, որ ինքը եղել է երեք դիարաններում՝ Սումգայիթում, Բաքվում, Մարդաքյանում, եւ իր աղջկա դին գտել է Մարդաքյանում: Նա 71 համարն էր չճանաչված դիակների մեջ: Պ. Մանվելյանը Մոսկվայում ցուցմունք է տվել ու ստորագրել: Եվ իր ցուցմունքում նշել է, որ 3 դիարաններում նա տեսել է 100-ից ավելի դիակ: Այս պատմությունից կարելի է ենթադրել, որ Սումգայիթի դիարանում տեղ չլինելու պատճառով սպանվածների մի մասին բաշխել են Բաքվի եւ Մարդաքյանի դիարաններում:

Ի վերջո, նույնն են հաստատում նաեւ մեր ձեռքի տակ եղած զոհվածների մահվան բժշկական վկայականների տվյալները: Մահվան վկայականների մեջ ամենափոքր

համարը Իրինա Սելբումյանինն է՝ 73, իսկ ամենամեծ համարը՝ Իգոր Սելբումյանինը՝ 187: Երկու վկայականներն էլ տրված են Սումգայիթում, միեւնույն օրը՝ 1988 թ. մարտի 5-ին: Հաշվի առնելով այն ժամանակ երկրի դիարաններում գրանցման ընդհանուր կարգը (համարների հաշվարկը կատարվում էր յուրաքանչյուր տարվա սկզբից), կարող ենք ասել, որ Սումգայիթում երկու ամսվա ընթացքում, մինչեւ ջարդի օրերը մահացել է 73-ից քիչ մարդ, որը նշանակում է՝ օրը մոտ երկու մարդ: Իսկ ջարդի օրերին մահացածների թիվը կլինի առնվազն՝ 187-72, այսինքն՝ 115: Այդ օրերի բնական մահերի թիվը հանելուց հետո էլ սպանվածների թիվը կլինի 100-ից ավելի:

ՀՐԱՅՐ ՈՒՆՈՒԲԱՅՍ

**ՍՈՂՈՄՈՆ ԹԵԽԵՐՅԱՆԸ ՓՐԿԵՑ ԸՆՑ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ**



Լուսանկարը՝ Միգրա Խաչատրյանի (2015/2017) նորուց պատրաստվել է

Շահան Նաթալի, Սողոմոն Թեխերյան, Արշավիր Շիրակյան, Արամ Երկանյան, Պետրոս Տեր-Պողոսյան, Արտաշես Գեւորգյան, Ստեփան Ծաղիկյան, Ջարեհ Սելիք Շահնազարյան: Նրանք «Նեմեսիս» գործողության մասնակիցներ էին՝ նեմեսիսականներ: 1915-ին թուրքիայում կատարված Հայոց ցեղասպանությունից հետո նրանց կյանքի միակ առաքելությունն էր լուծել հայ ժողովրդի վրեժը: Հենց նրանց վրեժխնդրությամբ սպանվեցին թալեաթ եւ Հալիմ փաշաները, Ջեմալ Ազմին, Բեհաեդդին Շաքիրը, Էնվեր, Ֆաթիխ խաներն ու Ջիվանշիրը:

Անցել է 90 տարի մարտյան այն օրվանից, երբ հայ վրիժառու Սողոմոն Թեխերյանը Բեռլինում սպանեց Հայոց ցեղասպանության կազմակերպիչներից թալեաթ փաշային: 1921-ի մարտին Թեխերյանը թալեաթ փաշային գտնում է Բեռլինում: Փաշայի տունը Հարդենբերգ փողոցում էր: Թեխերյանը փաշայի տան դիմաց բնակարան է վարձում եւ մարտի 15-ին ատրճանակի մեկ կրակոցով սպանում է ոճրագործին:

Տեղի ունեցած դատավարության ժամանակ հայ վրիժառուն արդարացվում է: Երկար տարիներ ապրել է Բելգրադում, այնուհետև բնակություն հաստատել ԱՄՆ-ի Ֆրեզնո քաղաքում: Թեհիլեյանի հիշատակին հուշարձան է կանգնեցվել Ֆրեզնոյում, Թալինի շրջանի Մաստարա գյուղում եւ Երեւանում:

Երեկ Ազգային գրադարանում տեղի ունեցավ «Սողոմոն Թեհիլեյան. Վերհիշումներ. Թալեաթի ահաբեկումը» գրքի ռուսերեն թարգմանության շնորհանդեսը: Հիշողությունները գրի է առել արեւմտահայ գրող Վահան Մինախոյանը: Գրքում ներկայացված են Թեհիլեյանի հուշերը 1915թ. իրադարձությունները, Թալեաթի սպանությունը, 1921-ին Բեռլինում կայացած դատավարությունը: Գիրքը ռուսերեն թարգմանել է Եգոր Սերգիեւը: Նա համոզված է, որ գիրքը կօգնի ռուսալեզու ընթերցողին՝ հստակ պատկերացում կազմելու 20-րդ դարի առաջին տասնամյակում Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած իրադարձությունների մասին:

Գրքի առանձնահատկություններից է, որ Թեհիլեյանը հստակ նկարագրել է ժամանակաշրջանը: Արցախյան հերոսամարտի «խաչակիրներ» ջոկատի զինվոր Շահե Աճեյանը փաստում է, որ Թեհիլեյանը վերականգնեց հայ ժողովրդի պատիվն ու արժանապատվությունը: «Թուրքիան հասկացավ, որ ոչինչ անպատիժ չի մնում: Որ պատժի կարծանանա յուրաքանչյուրը, ով կխաղա հայ ժողովրդի անվան հետ: Հայ ազգը ցույց տվեց, որ աշխարհը պետք է հիշի Թուրքիայի իրականացրած Հայոց ցեղասպանությունը, որ փոշիացած դարակներից պետք է արխիվները բացվեն», ասաց նա «Արմատ»-ում: Աճեյանը համոզված է՝ երիտասարդության մեջ թեհիլեյանական ոգին բարձր է, որովհետև այսօր էլ հայ ազգը Թեհիլեյանների կարիք է զգում:

«Անհրաժեշտության դեպքում այդ գործողությունները կրկնվեն»: Աճեյանն առաջարկում է «Նեմեսիս» գործողության իրականացնողների աճյունները բերել Հայաստան ու ամփոփել Օիժեռնակաբերդի հուշահամալիրում:

«Միայն հիշելով, բողոքելով, անցյալով հպարտանալով 60 տարի անց պայքարն այլ բնույթ ստացավ: Թեհիլեյանի վրիժառությունը անձնավորված էր, իսկ մեր պայքարն ընդհանուր էր, ազգային ազատագրական պայքար էր», ասաց Հայաստանի ազատագրական հայ գաղտնի բանակի (ԱՄԱԼԱ) «Վան» գործողության հրամանատար Վազգեն Սիսյանը՝ փաստելով, որ հայ ժողովրդի պահանջը Թուրքիայից մեկն է. ոչ միայն Հայոց ցեղասպանության ճանաչում, այլև ողջ Արեւմտյան Հայաստանի վերադարձ:

Ժամանակագիրները փաստում են, որ Թեհիլեյանը ճիշտ ձեռով ներկայացրեց հայի ժողովրդի վրեժը, որովհետև Թուրքիայում անհնար է հասնել արդարության:

Թեպետ ժամանակները փոխվել են, ու այժմ Թուրքիան ներկայանում է որպես դեմոկրատ պետություն ու ցանկանում ընդգրկվել Եվրոմիության շարքերը, սակայն այս պետության ձեռագիրը չի փոխվել:

Վառ օրինակը Հրանտ Դինքի սպանությունն ու ընթացող զավեշտալի դատավարությունն են:

**Սթիվի Վոնդերն ու միջազգային այլ հայտնի կատարողներ՝ հանուն Հայոց ցեղասպանության ճանաչման**

Աշխարհահռչակ երգիչ Սթիվի Վոնդերն ու միջազգային այլ կատարողներ պատրաստվում են մինչև 2015 թ-ը


հանդես գալ մի քանի համերգային ծրագրերով՝ կոչ անելով Միացյալ Նահանգներին ճանաչել Հայոց ցեղասպանությունը: ,Never Against խորագիրը կրող համերգաշարը նվիրված կլինի ոչ միայն Հայոց, այլ նաև ԴարՖուրի, Կամբոջայի և Ռուանդայի ցեղասպանություններին:



Համերգները կկազմակերպվեն ԱՄՆ-ում բնակվող հայազգի երաժիշտների, ինչպես նաև Հայաստանի կառավարության աջակցությամբ: Մի բան, որ հնարավոր չէ անել քաղաքականության ուժի միջոցով, կարվի երաժշտությամբ,-ասել է Գլենդելուն հիմնված Արվեստագետները՝ հանուն խաղաղության կազմակերպության ղեկավար Անուշ Հովսեփյանը: Լոս Անջելեսում Հայաստանի հյուպատոս Գրիգոր Հովհաննիսյանն էլ նշել, որ այս ծրագիրն աջակցություն կստանա Հայաստանի կառավարության կողմից:

**Դրանահայ համայնը**

**Վախճանվեց Վարդան Քամալյանը**



Մարտի 14-ի առավոտյան, Թեհրանում, վախճանվեց Վարդան Քամալյանը, ում իր թաղեցիները ավելի շուտ ճանաչում էին «Հայ Վարդան» անունով:

Վարդան Քամալյանը գյուղացու զավակ էր, խիստ ազգասեր, դրանից էլ ստացել էր «Հայ» մականունը:

1956թ. նրա ընտանիքը տեղափոխվում է մայրաքաղաք՝ Թեհրան: 1959թ. մահանում է հայրը, որը թողնելով իր տասը զավակներին:

17 տարեկանում հասակակից տղաների հետ ժողովների էր նստում՝ քննարկելու հայ ժողովրդի վիճակը Սփյուռքում և հատկապես Իրանում:

1974թ. ապրիլի 23-ի երեկոյան երեք ընկերների՝ Արամի, Ժորժիկի և Վալդիի հետ միասին ի բողոք

Թուրքիայի հակահայ քաղաքականության քարտեռով հարձակվեցին Թեհրանում Թուրքիայի դեսպանատան վրա և փշրեցին նրա ապակիները: Նույն օրը կասկածելի պայմաններում ձերբակալվեցին չորս հայորդիները: Մի քանի օր անց ազատվեցին Արամն ու Վալոդը, իսկ Ժորժը, խիստ դիմադրության մեղքով աքտորվեց երկրի հարավ արևելյան Ջահեդան քաղաք: Վարդանն էլ բավական կտտանքների ենթարկվեց, իսկ ազատ արձակվելուց հետո մեկնեց Ֆրանսիա՝ ուսումը շարունակելու: Իսլամական հեղափոխության հաղթանակից հետո, արդեն ուսումն ավարտած վերադարձավ Թեհրան և կյանքի կոչեց «Հայասա» կոոպերատիվ հաստատությունն ու բանկը, որի լոգոն Հայաստանի առաջին հանրապետության և Խորհրդային Հայաստանի միակցված դրոշմների պատկերն էր: Վ. Քամայանը զբաղվեց նաև հայ գրի տարածմամբ՝ հրատարակեց հայկական տառատեսակների հավաքածո՝ «Այբուբեն»-ը:



Հետհեղափոխության առաջին խորհրդարանի ընտրություններում առաջադրեց իր թեկնածությունը՝ Թեհրանի և հյուսիսային իրանահայությանը աթոռի համար:

Հայաստանի անկախացումից կարճ ժամանակ անց ընտանյոք տեղափոխվեց հայրենիք և հաստատվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում... բայց, դժբախտաբար, կյանքը նրան երկար առիթ չտվեց...

*«Լույս»-ի խմբագրությունը ի խորոց սրտի՝ վշտակցում է Վարդանի մահվան կապակցությամբ:*

## Շայաստան

### ՀՉՈՍԿԱԳԻՐ ԵՆԻՍՎՈՒՄ՝ ԼՂ-Ի ՄԱՍԻՆ

Ենիսվ-ի պատվիրակները 28/01/2011 հանդես են եկել գրավոր հռչակագրով, որի անվանումն է «Լեռնային Ղարաբաղի ժողովրդավարական պետության կառուցում», այդ մասին հայտնել է «News.am»-ը:

Փաստաթղթում ասվում է, որ Ադրբեջանը իրեն հռչակել է 1918-20 թթ. գոյություն ունեցած Ադրբեջանի ժողովրդավարական պետության իրավահաջորդ, իսկ Լեռնային Ղարաբաղը (Արցախը) երբեք չի եղել այդ պետության մասը: Միայն քեմալականների եւ բոլշեւիկների միջեւ տեղի ունեցած «գործարքով» է, որ Արցախը դարձել է Սովետական Ադրբեջանի մաս:

«1991 թվականին Ղարաբաղի բնակչությունը հանրաքվեի միջոցով կողմ է քվեարկել անկախանալուն, ինչին հետեւել են բազմաթիվ միջազգային դիտորդներ:

Սակայն, հրաժարվելով ընդունել Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը, Ադրբեջանը սանձազերծել է լայնամասշտաբ ռազմական գործողություններ, որոնք ավարտվել են 1994 թվականին կնքված հրադադարի պայմանագրով: Թեեւ Ադրբեջանը դեռեւս խախտում է հրադադարի ռեժիմը, Ղարաբաղի ժողովուրդը շարունակում է ժողովրդավարական երկիր կառուցելու գործընթացը, դեկավարվելով միջազգային նորմերով եւ չափանիշներով, ինչի կարելու էլ եննետներից է 2006 թվականին տեղի ունեցած սահմանադրական հանրաքվեն:

Շատ միջազգային դիտորդներ, փորձագետներ ու լրագրողներ ընդունել են այդ հանրաքվեն, ինչպես նաեւ դրան հաջորդած նախագահական եւ խորհրդարանական, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները: Այդ ընտրությունները նրանք դիտարկել են որպես ժողովրդավարական, ազատ եւ արդար: Մեծ թվով քաղաքական կուսակցություններ, լրատվամիջոցներ եւ ՀԿ-ներ են գործում Արցախում, իսկ այդ երկրի շուկայական տնտեսությունը եւ ազգային օրենսդրությունը համապատասխանում են միջազգային չափանիշներին: Լեռնային Ղարաբաղը, իր առջեւ դնելով ժողովրդավարական երկիր կառուցելու նպատակ, հանդիսանում է կայացած պետություն եւ արժանի է միջազգային ճանաչման ու միջազգային բոլոր կազմակերպություններին անդամակցելու», ասված է փաստաթղթում: Փաստաթուղթը ստորագրել է ԵՆԻՍՎ 29 պատգամավոր՝ ԵՄ անդամ 12 երկրներից:

### ՕՐԱԿԱՆ 1,5 ՄԼՆ ԼԻՏՐ

*ԲԵՆԶԻՆ ՈՒ ԴԻԶԿԱՆՆԵԼԻՔ ԿՆԵՐՍՈՒԾՎԵՆ ԻՐԱՆԻՑ ԱՐԴԵՆ 2014-ԻՆ*

Իրանի բարձրաստիճան նավթային պաշտոնյան հայտարարել է, որ Իրանը պետք է ամեն օր 1.5 մլն լիտր բենզին եւ դիզելային վառելիք արտահանի Հայաստան:

«Ըստ համաձայնության, յուրաքանչյուր օր Իրանը կարտահանի 750 000 լիտր բենզին եւ 750 000 լիտր դիզելային վառելիք դեպի Երեւան», ըստ իրանական աղբյուրների տեղեկացման, հայտարարել է Իրանի նավթի նախարարի տեղակալ եւ Նավթի մշակման ու վաճառքի ազգային ընկերության տնօրեն Ալիռզա Զեյքամին:

Հունվարի վերջին Իրանի նավթի նախարար Մասուդ Միրկազեմին հայտարարել էր, որ Իրանը եւ Հայաստանը ծրագրում են նոր նավթամուղ կառուցել՝ ավելացնելու կովկասյան երկրներ էներգակիրների մատակարարումը: «Ազգը» տեղեկացրել էր, որ Հայաստանի էներգետիկայի եւ բնական ռեսուրսների նախարար Արմեն Մովսիսյանի եւ Իրանի նավթի նախարար Մասուդ Միրկազեմիի հունվարի 29-ին տեղի ունեցած հանդիպմանը Իրանի նավթի նախարարը նշել էր, որ խողովակաշարը սկիզբ կառնի Թավրիզ քաղաքից եւ ուղիղ գծով կհասնի մինչեւ հայկական սահման:

Միրկազեմին ընդգծել էր, որ այդ խողովակաշարը կարող է օգնել Հայաստանին՝ բավարարելու նավթամթերքների կարիքների մի մասը Իրանի Իսլամական Հանրապետության նավթի միջոցով: Իրանի նավթի նախարարը այլ մանրամասներ չէր հաղորդել, միայն հավելելով, որ նավթամթերքների արտահանման ծավալներն ու գինը կորոշվեն մոտ ապագայում կայանալիք հանդիպմանը:

Մինչեւ 2014 թ. 365 կմ-ոց, 8-ոյսյանոց նավթամուղը Թավրիզից Երեւան կտեղափոխի նավթամթերքներ:



**Ֆորչյուն Օյլ ընկերությունը Հայաստանում կեն միլիարդ կնեդրնի**




Վարչապետ Տիգրան Սարգսյանն ընդունել է Ֆորչյուն Օյլե ընկերության պատվիրակությանը ընկերության գործադիր փոխնախագահ Դանիել Չյուի գլխավորությամբ: Հանդիպմանը ներկա է եղել նաև Հայաստանի Հանրապետությունում ՉԺՀ արտակարգ և լիազոր դեսպան Թիան Չանգ Չուն: Ողջունելով հյուրերին կառավարությունում, վարչապետը նշել է, որ գործադիրը կարևորում է հանքահումքային ոլորտում կատարվող ներդրումներն ու բարձր է գնահատում այն մեծածավալ ներդրումային ծրագիրը, որով հանդես է գալիս Ֆորչյուն Օյլե ընկերությունը: Ընկերության ներկայացուցիչները, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, նշել են, որ կարևորում են Հայաստանի Հանրապետությունում կատարվելիք ներդրումները, որոնք կիրականացվեն երկու փուլով, և որոնց ընդհանուր արժեքը համարժեք կլինի շուրջ կես միլիարդ ԱՄՆ դոլարի, ինչի արդյունքում մեր երկրում կստեղծվեն նոր աշխատատեղեր, կներդրվեն նորագույն տեխնոլոգիաներ, կիրականացվի մարդկային ռեսուրսների ու համայնքների ուժեղացում՝ բնապահպանական լավագույն չափանիշների պահպանմամբ: Ձրուցակիցներն անդրադարձել են նաև մեր երկրում երկարաժամկետ հեռանկարում ընկերության ներդրումների շարունակականության հարցերին: HayNews.am

**Քրքորյանը փակում է Լինսին եւ նվիրում գումարներն այլ կազմակերպության**

Հայկական ծագումով ամերիկացի միլիարդատեր, Հայաստանի Ազգային Հերոս Քրքորյանը պատրաստվում է փակել 1989 թ-ին իր միջոցներով ստեղծված Լինսին հիմնադրամն ու նվիրել բոլոր ակտիվները՝ շուրջ 200 մլն դոլար, UCLA բարեգործական կազմակերպությանը: Այդ մասին հայտնում են տեղական լրատվամիջոցները: Հայտարարությունն արել է UCLA-ի պատասխանատու Գենա Բլոկը՝ Լոս Անջելեսի մամուլի սրահներից մեկում: Այդ գումարներով Քրքորյանն ու UCLA-ն ստեղծում են նոր հիմնադրամ, որը կոչվելու է 'Dreams' ,երագե: Այն զբաղվելու է բարեգործական առաքելությամբ ինչպես Լոս Անջելեսում, այնպես էլ Միացյալ Նահանգներում: Քրքորյանը հույս է հայտնել, որ այս նախաձեռնությանը կմիանան բազմաթիվ այլ իրավաբանական և ֆիզիկական անձինք: Հիշեցնենք, որ Լինսինն հսկայական գործունեություն է ունեցել նաև Հայաստանում՝ կառուցելով բազմաթիվ դպրոցներ, վերանորոգելով մշակույթի օջախներ և այլն: HayNews.am

**Մալթայի Ինքնիշխան Ռազմական Ուխտի հայազգի միակ ասպետը Հայաստանի դեսպանն է**



Նախագահ Սերժ Սարգսյանին իր հավատարմագրերն է հանձնել Հայաստանի Հանրապետությունում Մալթայի Ինքնիշխան Ռազմական Ուխտի նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Ժան-Միշել Ուղուրյանը: Նախագահը շնորհավորել է դեսպանին՝ պաշտոնն ստանձնելու կապակցությամբ, մաղթել հաջողություններ: Դեսպան Ժան-Միշել Ուղուրյանը նշել է, որ լինելով Մալթայի Ինքնիշխան Ռազմական Ուխտի հայկական ծագումով միակ ասպետը, իր համար մեծ պատիվ է համարում ստանձնել դեսպանի պաշտոնն ու Հայաստանում շարունակել և զարգացնել Մալթայի Ինքնիշխան Ուխտի ծրագրերը: Ուրախալի է և ուշագրավ, որ նման բարձր պաշտոնի է նշանակվում հայազգի ներկայացուցիչը: Վստահ են, որ Ձեր հայկական ծագումն է՛լ ավելի կոյուրացնի Ձեր գործունեությունը Հայաստանում: Վստահ են նաև, որ Ձեր ակտիվ գործունեությամբ Դուք մեծապես կնպաստեք Մալթայի Ինքնիշխան Ուխտի մասին հասարակության իրազեկվածության բարձրացմանը, -ասել է Նախագահ Սարգսյանը՝ բարձր գնահատելով Ուխտի բարեգործական առաքելությունը:

**ԽՐԱԽՈՒՍՎՈՒՄ Է ՍՓՅՈՒՌԱՆԱՅԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԻԵՈՒՄ**

ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունն ամփոփել է 2010-2011 ուսումնական տարում Հայաստանի մասնագիտական ուսումնական հաստատություններ արտոնյալ պայմաններով սփյուռքահայ դիմորդների ընդունելության արդյունքները: Նախարարության կողմից 1997 թվականից իրականացվող այս ծրագիրը նպատակ ունի մասնագիտական կրթության միջոցով Սփյուռքի երիտասարդությանը կապել հայրենիքին, մասնագիտական կադրեր պատրաստելու գործում աջակցել Սփյուռքին, նպաստել տեղերում ազգային կրթության կազմակերպմանը եւ հայագիտության զարգացմանն ուղղված գործին, ինչպես նաև՝ խրախուսել ներգաղթը: Սփյուռքահայերի կրթությունը Հայաստանում կազմակերպվում է բոլոր ուսումնական աստիճաններում (միջին մասնագիտական, բակալավրի, մագիստրոսի, ասպիրանտի, դոկտորանտի), ուսուցման բոլոր ձևերով (առկա, հեռակա, հեռավար), վճարովի եւ անվճար հիմունքներով: 2010-2011 ուսումնական տարվա տվյալներով ընդհանուր առմամբ 3370 սփյուռքահայ է սովորում

Հայաստանի պետական բուհերում, որից 296-ը պետական պատվերի, իսկ 3074-ը՝ վճարովի համակարգում: Սփյուռքահայ 466 երիտասարդ մասնագիտական բարձրագույն կրթություն է ստանում հանրապետությունում գործող միջազգային, իսկ 785-ը՝ ոչ պետական բուհերում: Քոլեջներում սովորում է 205 սփյուռքահայ ուսանող:

Մեր հայրենակիցներն ընթացիկ ուսումնական տարում ամենաշատը նախընտրել են կրթություն ստանալ Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանում՝ 406 ուսանող, ԵՊՀ-ում՝ 280, Ռուսաստանի տուրիզմի և սերվիսի պետական համալսարանում՝ 234, Մովսես Խորենացու անվան համալսարանում՝ 94, Երեւանի պետական հեռակետային բժշկական քոլեջում՝ 83:

Որդեգրած ռազմավարությունն իրագործվում է սփյուռքահայերի համար ընդունելության արտոնյալ պայմաններ սահմանելու միջոցով: Վերջինիս կարիքը բխում է այն իրողությունից, որ Հայաստանից դուրս միջնակարգ կրթություն ստացած անձը դժվարություններ է ունենում Հայաստանում գործող կրթական չափորոշիչներին և ուսումնական ծրագրերին համապատասխան ընդունելության քննությունները հանձնելու հետ կապված: Սփյուռքի երիտասարդության ստվար մասի հայերենի չինացությունը կամ ոչ բավարար իմացությունը նույնպես խոչընդոտում է Հայաստանում նրանց կրթություն ստանալուն: Արտոնյալ պայմանները սփյուռքահայերին հնարավորություն են տալիս ընդունվելու առանց քննությունների՝ նախապատրաստական բաժնի միջոցով:

Ծրագիրն անուղղակիորեն ծառայում է նաև ներգաղթին: Հարցումների համաձայն՝ ՀՀ ուսումնական հաստատություններում կրթություն ստացած սփյուռքահայերի մի մասն այլևս չի վերադառնում իր բնակության երկիրը և հետագա կյանքը կապում է Հայաստանի հետ: Վերջին հինգ տարիներին նման դիմորդների թիվն աճում է: Սփյուռքահայերի անվճար կրթությունը կազմակերպվում է ՀՀ կառավարության կողմից տրամադրվող 70 պետաֆինանսավորման տեղերի շրջանակում: Տեղերի բաշխումը իրականացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից ստեղծվող հանձնաժողովի նիստում առաջնահերթություն տալով հայագիտական, մանկավարժական, արվեստի և Սփյուռքի համար գերակա նշանակության ունեցող այլ մասնագիտություններին:

Հատուկ պայմաններ են ստեղծված Սփյուռքում աշխատող մանկավարժների համար, ովքեր կարող են իրենց ուսումը շարունակել Մանկավարժական համալսարանի հեռակա բաժնում, մագիստրատուրայում կամ բակալավրիատում: Բարձրագույն ոչ մանկավարժական կրթության առկայության պարագայում կարող է հաշվարկվել առարկայական տարբերությունը և ուսումը սկսվի 2-րդ կամ 3-րդ կուրսից:

2011 թվականին սփյուռքահայ դիմորդների թվի աճ է նախատեսվում, քանի որ "Կրթության մասին" և "Բարձրագույն և հետբուհական կրթության մասին" ՀՀ օրենքներում կատարվել է լրացում, համաձայն որի, Հայաստանից դուրս կրթություն ստացած երկբաղաբացիները կարող են օգտվել օտարերկրացիների համար նախատեսված արտոնություններից, ինչի հնարավորությունը նախկինում չի եղել:

2010-2011 ուսումնական տարում Հայաստանի բուհերում և քոլեջներում սովորող սփյուռքահայերը հիմնականում եկել են Կրաստանից՝ 1645 ուսանող, Ռուսաստանից՝ 1073, Իրանից՝ 291, Սիրիայից՝ 82, Ուկրաինայից՝ 65 և Թուրքմենստանից՝ 40:

## Միջազգային

### 600 միլիարդ ռիալ հատկացվելու է Թավրիզ-հայաստան մայրուղու կառուցմանը

Իրանի Խորհրդարանում Թավրիզի պատգամավոր Ալիռեզա Մոնադիի հաղորդած լուրի համաձայն՝ առաջիկա տարվա նախատեսված բյուջեում 600 միլիարդ ռիալ հատկացվելու է Թավրիզ-հայաստան մայրուղու կառուցմանը, քանի որ այս մայրուղին գտնվում է զբոսաշրջության շրջանների գոտում և իր ճանապարհին կտրելու է ավելի քան 70 գյուղեր, որոնցից յուրաքանչյուրն ունի իր յուրահատուկ գրավչությունը: Մոնադին այս մայրուղու մի այլ հատկանիշը համարեց՝ սահմանային շուկաները, ժողովրդի դյուրին և ամենօրյա երթևեկությունն ու առևտրի զարգացումը:

### ՎԱԽՃԱՆԿԵԼ Ե ԱՄԵՐԻԿԱՆՅ ՖԻԼՄԱՐՏԱԴՐԻՉ ՄԱՅԷԼ ՐԱԿՈՒՅԱՆԸ

Դեկտեմբերի 10-ին Կալիֆոռնիայի իր բնակարանում վախճանվել է ամերիկահայ վաստակաշատ ֆիլմարտադրիչ Մայքլ Հակոբյանը, տեղեկացնում է Կանադայում հրատարակվող «Ապագայ» շաբաթաթերթը:

Մայքլ Հակոբյանը ծնվել էր Խարբերդում 1913 թվին:

Տեղասպանությունից հրաշքով փրկված երեխան մոր հետ հետագայում հաստատվել էր Ֆրեզնոյում և Հարվարդ համալսարանից վկայվել միջազգային հարաբերությունների դոկտորայի աստիճանով: Սակայն նվիրվել է ֆիլմարվեստին և դրա միջոցով հայ ժողովրդի



արդար դատի միջազգային ճանաչման նպատակին: 1979-ին հիմնել էր «Armenian Film Foundation» ոչ շահութաբեր հաստատությունը, որը թողարկել է 17 վավերագրական ֆիլմեր հայկական ինքնության, մշակույթի և իրավունքների մասին: Դրանց թվում են «Where Are My People» (1965), «Որտե՞ղ է իմ ժողովուրդը», «The Forgotten Genocide» (1975) «Մոռացված ցեղասպանությունը» և «The River Ran Red» (2008), «Գետը կարմիր ներկվեց» ֆիլմերը: Վերջինս 2009-ին արժանացել է Նյու Յորքի վավերագրական ֆիլմերի միջազգային փառատոնի առաջին մրցանակին:

Իր 50-ամյա գործունեության ընթացքում իր հիմնադրած «Atlantis Film Co.» կինոընկերության միջոցով նկարահանել է ավելի քան 50 ֆիլմեր փոքրամասնությունների մասին: Նրա ստեղծագործությունները երկու անգամ արժանացել են «Էմմի» մրցանակի հիշատակության:

## Արեւմտյան Հայաստան

### ԴԵՐՍԻՄԻ ԳՅՈՒՂԵՐԻ 75 ՏՈՒՍՈՐ ԸԱՅԱՐՆԱԿ Է

Թուրքիայի Դերսիմի հայերի միությունը հիմնադրվել է 3 ամիս առաջ: Միությանն անդամակցում է շուրջ 80 մարդ: Նրանք հիմնականում կրոնական եւ ազգային արմատներին վերադարձած հայերն են: Միության ստեղծման նպատակը հայապահպանությունն է, աշխարհի եւ Դերսիմի հայերի կապերի ամրապնդումը:

Միության նախագահ Միհրան Գյուլթեքինի մեկնաբանությամբ՝ Դերսիմում բնակվող գրեթե բոլոր ընտանիքներում հնարավոր է հայկական արմատներ գտնել: Իր հայ լինելու մասին Գյուլթեքինն իմացել է 7 տարեկանում, քրիստոնեական հավատքի վերադարձել 50-ում: «Ընտանիքիս անդամների մի մասը հորդորում էր չդիմել դատարան ու չվերականգնել ինքնությունը, սակայն մյուս մասը սատարեց եւ դատական երկար գործընթացներից հետո հասա նպատակիս», «Ուրբաթ» ակունքում ասաց Գյուլթեքինը:



Դերսիմի գյուղական համայնքների 75 տղուսը հայեր են, սակայն նրանք քաջություն չունեն այդ մասին հայտարարելու: Նա փաստում է, որ իսլամական ավանդույթների խորացման ֆոնի վրա, Թուրքիայի վարչապետի խոսքերով ասած, հայ կոչվելը հայիոյանքի մասն մի բան է: Թեպետ իշխանություններն առանձնապես ճնշում չեն գործադրում ինքնության վերադարձած հայերի նկատմամբ, սակայն Դերսիմի հայերին հետապնդում են անցյալի հիշողություններն ու վտանգը, որ կրկին հայերի դեմ կոտորածներ կսկսվեն: Թուրքիայում ապրող դավաճափոխ հայերին ընդունում են որպես մահմեդականի: Նա հավելում է, որ Դերսիմի հայերի հարաբերությունները ստամբուլահայ համայնքի հետ այնքան էլ ջերմ ու բարեկամական չեն, որովհետեւ կա պատմեջ, հոգեբանական ճնշում, ինչի արդյունքում Դերսիմի հայերը մեկուսացված են:

Արդեն 5 տարի օգոստոս ամսին Դերսիմում մշակութային փառատոն է անցկացվում: Գյուլթեքինը հայ երիտասարդներին հրավիրում է մասնակցելու մշակութային այդ իրադարձությանն ու հավելում, որ դա կօգնի հոգեւոր կապի հաստատմանը:

### Թուրքիայում հայերը վախենում են իրենց երեխաներին հայկական դպրոցներ ուղարկել. ԵՆՍՆՎ-ի զեկույց

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի Ազգայնականության և անհանդուրժողականության դեմ պայքարի հանձնաժողովը հրապարակել է Թուրքիայի վերաբերյալ իր չորրորդ զեկույցը: Այս մասին հայտնում է Milliyet-ը:

Ձեկույցի մեջ Թուրքիան քննադատության է ենթարկվում այդ երկրում ազգային փոքրամասնությունների վատ

վիճակի համար: Թուրքական թերթը բերում է կետեր, որոնք տեղ են գտել զեկույցում:

- Թուրքիայի Սահմանադրության 42-րդ կետը, որ վերաբերում է մայրենի լեզվին, պետք է փոփոխությունների ենթարկվի:

- Հայերը, վախենալով տարբեր վտանգներից և սպառնալիքներից, հրաժարվում են իրենց երեխաներին ուղարկել հայկական դպրոցներ:

- Հույների կրթական խնդիրները լուծելու համար շտապ քայլեր պետք է ձեռնարկվեն: Հեյբելիադայի կրոնական դպրոցը դեռ փակ է:

- Պետք է հետևողական քայլեր ձեռնարկել հակասեմիտական դրսևորումների դեմ:

- Հույների կարգավիճակի մեջ ոչ մի փոփոխություն տեղի չի ունեցել:

HayNews.am

## Հասարակական

### ԿՏԱՆԳԱՎՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐ ԸԱՅԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԴՆՍ

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

1933 թվին Դեւոնդ արք. Դուրյանի սրտին խրված դաշույնը, որը նրա անմիջական մահվան եւ հայկական եկեղեցու երկփեղկման պատճառ դարձավ, շարունակում է իր քայքայիչ դերը կատարել հայկական համայնքներում: Որոշ մարդիկ ցանկանում են մոռացության տալ այդ արյունոտ իրադարձությունը՝ հավատալով, որ այդ դեպքում հայկական եկեղեցու տարանջատվածությունը կարող է օրինականացվել:

1930-ական թվերին Դաշնակցական կուսակցության կողմից Ամերիկայում մի շարք հերձվածային եկեղեցիների ձեռքբերումը հետագայում շարունակվեց այլ բռնությունների գործադրմամբ, երբ այդ նույն կուսակցությունը 1956 թվին լիբանանյան բանակի տանկերին կրկնակիս բռնագրավեց Ամթիլիասի կաթողիկոսությունը:

Հայկական եկեղեցու ոչ մի խելամիտ անձնավորություն չի կարող մոռացության մատնել պատմության այս տխուր փաստերը այնքան ժամանակ, որ հայկական եկեղեցին շարունակում է պառակտված մնալ եւ այդ եկեղեցու մի հատվածը ենթարկվում է քաղաքական մի կուսակցության թելադրանքներին:

1956 թվից ի վեր Ամթիլիասի կաթողիկոսությունը իր «շոշափուկները» տարածել է նաեւ այլ համայնքների վրա, եւ սառը պատերազմի ուրվականը նպաստել է, որ այդ աթոռի քաղաքական ղեկավարներն իրենց հովանու տակ վերցնեն Իրանի թեմը, Հունաստանի թեմի մի մասը եւ ամրապնդեն իրենց դիրքերը Ամերիկայի եւ Կանադայի որոշ հերձվածային եկեղեցիներում:

Սառըպատերազմյան տարիների ամբողջ ժամանակաշրջանում էջմիածնի Մայր աթոռի դեմ ուղղված այս արշավը մի կերպ «արդարացվում էր» ընդհանուր առմամբ կոմունիզմի դեմ մղված կարգախոսներով, բայց երբ կոմունիստական վարչակարգը փլուզվեց, պարզվեց, որ «կայսրն իսկապես մերկ է»: Եկեղեցու պառակտման պատճառաբանությունը հոդս ցնդեց, բայց տվյալ քաղաքական կուսակցությունն այնքան էր խրված այդ համակարգում, որ չցանկացավ ձեռքից բաց թողնել իր «ավարը»: Եվ պառակտումը շարունակվեց: Այդ բռնագրավյալ թեմերի առաջնորդները շատ լավ են պատրաստված արդարացնելու համար պառակտումը, սակայն համայնքի անդամների մեջ այդ

«մարտունակությունը» այնքան էլ ցայտուն չէ: Եվ սա ձեռնտու է անթիլիասական եկեղեցու առաջնորդներին:

Տարիների ընթացքում եկեղեցին միավորելու փորձեր ու նախաձեռնություններ եղել են, բայց որոշակի արդյունք չի արձանագրվել:

Նորին Սրբություն Գարեգին Բ-ն փորձել է բանակցել Անթիլիասի հետ համընդհանուր որոշումներ ընդունելու շուրջը, բայց ցարդ հաջողության չի հասել: Արարողությունների եւ ծիսակատարությունների հարցերի վերաբերյալ համատեղ մի հանձնախումբ, ճիշտ է, գործում է, սակայն այդ հարցերում տարակարծություններ արդեն երբեք չեն եղել:

Սուրբ Էջմիածինը, ջանասիրաբար աշխատելով վերակենդանացնել հոգևոր կյանքը Հայաստանում 70 տարվա աթեիստական իշխանությունից հետո, միաժամանակ պարտավորված է պայքարել նաեւ օտար աղանդների եւ անթիլիասական եկեղեցու մարտահրավերների դեմ: Թվում է, թե Անթիլիասը տազնապած է Էջմիածնի թողարկած քաջատեղյակ ու զարգացած հոգևորականների քանակով, որոնք պատրաստ են հոգալու Հայաստանի եւ Սփյուռքի իրենց հայրենակիցների հոգևոր կյանքի կարիքները:

Վեհափառ հայրապետը նախաձեռնել է նաեւ իր իրավասությունների տակ գտնվող եկեղեցիների համար միասնական կանոնադրություն մշակելու ծանր պարտականությունը: Տարիներ շարունակ թեմերի առաջնորդներն ու հոգևոր հովիվները մեծ վնաս են հասցրել Մայր աթոռի հեղինակությանը կամ անձեռնհասության, կամ էլ անձնական շահերին տուրք տալու հետեւանքով: Հասկանալի է, ուստի, որ որեւէ դրական փոփոխություն այդ ասպարեզում պահանջելու է երկար ժամանակ:

Կաթոլիկական եկեղեցին ուժեղ է, որովհետեւ Հռոմի պապն է կարդինալներ նշանակում տարբեր թեմերում, եւ այդ գործընթացը ընդունված է բոլորի կողմից: Մեր եկեղեցին շատ ավելի ժողովրդավարական ավանդույթներ ունի եւ չի կարող թույլատրել նման ավտորիտար մոտեցում: Բայց պետք է խոստովանել, որ ներկա գլոբալիզացիայի դարում գործունեությունը շարունակելու համար եկեղեցին եւ եկեղեցական իշխանությունները կարիք ունեն որոշակի հարգանքի, համերաշխության եւ ներդաշնակության:

Եվրոպական մի շարք համայնքներում անհանգստացնող մեկնաբանություններ արդեն սկսել են հնչել, որովհետեւ որոշ շրջանակներ չեն կարողանում տանել Մայր աթոռի իշխանության ամրապնդումը ամբողջ հայկական եկեղեցու համակարգում: Անանուն, անստորագիր հոդվածներ են հայտնվում Հայաստանում դեղին մամուլի դասին պատկանող թերթերում, եւ այդ հոդվածները հետագայում հայտնվում են Սփյուռքի առավել լայն շրջանառություն ունեցող թերթերում: Սփյուռքում, դժբախտաբար, թվով քիչ են բարեխիղճ լրագրողները, որոնք ժամանակ կարող են հատկացնել ստուգելու հոդվածների սկզբնաղբյուրները, նախքան դրանց հեղինակների լարած ծուղակի մեջ ընկնելը:

Ասվածի որպես օրինակ կարող են ծառայել Հայաստանում փոքր տպաքանակով լույս տեսնող եւ «Հրապարակ» անունը կրող քիչ հայտնի թերթում հրատարակված երկու անստորագիր հոդվածներ, որոնք պնդում են, թե ֆրանսահայ թեմը իբր դժգոհ է Սբ Էջմիածնի իշխանությունից: Օգտագործելով ահաբեկչական մարտավարությունը՝ այս հոդվածների հեղինակները նաեւ մեղադրական խոսքեր են ուղղել

Նորին Սրբությանը, նշելով, որ իբր կաթողիկոսը ցանկանում է տնօրինել թեմի ֆինանսական միջոցները:

Մարդիկ, որոնք տասնամյակներ շարունակ բացարձակապես անտարբեր էին հերձվածային եկեղեցիները բռնագրավելու ու շահագործելու Դաշնակցական կուսակցության գործունեության նկատմամբ, այժմ հանկարծ սկսել են տեր կանգնել եկեղեցու ունեցվածքին, դավեր հյուսելով Վեհափառ հայրապետի դեմ:

Հայաստանում որեւէ մեկը կարող է նման երկրորդական թերթերում «տարածք» գնել անձնական վիրավորանք հասցնելու նպատակով որեւէ մեկին, օգտվելով իրենց անձեռնմխելիությունից: Եվ հենց մի չարամիտ ակնարկ տպագրվի մամուլի էջերում՝ հեշտությամբ իր տարածումն է գտնում Սփյուռքում: Ձարմանալի է սակայն, որ Ստամբուլում լույս տեսնող «Մարմարա» լրջախոս թերթն է կուլ տվել խայծը եւ թակարդն ընկել հրապարակելով կողմածը: Անհարգալիք վերաբերմունքի այս դրսեւորումը, որը նպատակ է հետապնդում խաթարելու Սբ Էջմիածնի հեղինակությունը, ինչ խոսք, ձեռնտու էր Անթիլիասի կաթողիկոսությանը, նկատի առնելով, որ ինքն է սկզբնավորել թշնամանքը Էջմիածնի դեմ: Բայց հրահրված էր նաեւ մի կուսակցության կողմից, որը ղեկավարում է Հայաստանի նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը: Վերջինս փորձել էր օգտագործել Նորին Սրբությանը իր կարճատեւ քաղաքական նպատակների համար, ճիշտ այնպես, ինչպես թուրքերն էին վարվել Մեսրոպ արք. Սուրբաբյանի հետ: Դաշնակցականներն իրենց հերթին օգտագործում են կաթողիկոս Արամ Ա-ին (եւ նրա նախորդներին): Բայց նեոգ խաղերն իրենց նպատակին չհասան, որովհետեւ Գարեգին Բ կաթողիկոսը որոշեց միջնորդի դերն ստանձնել նախագահական վերջին ընտրություններին հաջորդած արյունալի դեպքերից հետո: Նախկին նախագահ Տեր-Պետրոսյանը հրաժարվեց ընդունել Վեհափառին եւ անմիջապես ամենատեղի ձեւով չարամիտ ու թունոտ արշավ ծավալեց նրա դեմ իրեն ենթակա զանգվածային լրատվությունների «Հայկական ժամանակ» եւ «Չորրորդ իշխանություն» թերթերի էջերում: «Հրապարակը» նույնպես թվում է, թե ընդդիմադիր կոչվող ԶԼՄ-ների շարքին է պատկանում, չնայած շատ քչերին է հայտնի նրա անունը:

Քանի որ չհաջողվեց Մայր աթոռին ներքաշել երկպառակտչական, կործանարար «քաղաքականության» մեջ, այդ թերթերն ու նրանց հովանավորները որոշեցին սրբավայրն ու նրա առաջնորդին անվանարկությունների ու վիրավորական պիտակավորումների թիրախ դարձնել:

Ի պատասխան դեղին մամուլի էջերում հայտնված այդ պիտակավորումներին՝ Սբ Էջմիածինը մի հայտարարություն է հրապարակել, որտեղ ասված է, իմիջիայլոց, որ փետրվարի 5-ին «Հրապարակ» օրաթերթում տպագրված մտահոգությունները ֆրանսահայ հասարակության դժգոհության վերաբերյալ «անհիմն են եւ իրականությանը չեն համապատասխանում»: «Այս առնչությամբ տեղեկացնում ենք, որ 2009 թ. նոյեմբերին Մայր աթոռ Սբ Էջմիածնում գումարված Թեմական-ներկայացուցչական ժողովում թեմերից ժամանած առաջնորդները եւ աշխարհական պատվիրակները հաստատեցին Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու բոլոր թեմերի համար տիպային կանոնադրությունը, որտեղ հստակեցվեցին թեմական-եկեղեցական կանոնադրությունների



հիմնական սկզբունքները», ասված է Մայր աթոռ Ար Էջմիածնի տեղեկատվական համակարգչային էջում:

Թվում է, թե տվյալ մութ ուժերի ահ ու շփոթությունները չնչոք քաղաքականությունը ներթափանցել է նաև մեր ափերը: Մայր աթոռի գերիշխանության պահպանումը բխում է մեր ամբողջ ազգի շահերից: Մինչ գլոբալիզացիան 21-րդ դարում մարդկանց եւ հասարակություններին համախմբում, ի մի է բերում, տրամաբանական է եզրակացնել, որ տարբեր համայնքներ միեւնույն կանոնակարգային դրույթները որդեգրեն՝ ապահովելու Հայաստանյայց եկեղեցու միասնականությունն ու ներդաշնակությունը:

Ար Էջմիածինը որոշակի լիազորություններ չունի իր նկատմամբ հարգանք պարտադրելու, բայց դարեր շարունակ նրա հավատացյալների առողջ դատողությունն ու ուժեղ բնագոյր բարձր են պահել նրա հեղինակությունն ու սրբությունը:

Հոյս ունենանք, որ այդ դատողությունն ու բնագոյր դեռես կենդանի են մեր մեջ:

*Դետրոյթ, ԱՄՆ*

**ԵՂԻԿ ՋԵՐԵՋՅԱՆ.**

**«ՊԱՍԿՏԵՑԻՐ, ԹԵ՞ ՄԻԱՏՐԻՐ ՍՓՅՈՒՔԸ ԵՐԿՊԱԼԱՏ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԳԱՂԱՓԱՐՈՎ»**



Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության կենտրոնական վարչության անդամ, 17 տարի Լիբանանի պառլամենտի պատգամավոր եղած, պատմական քաղաքական 6 գիրք հեղինակած Եղիկ Ջերեջյանը կարճ ժամանակով Հայաստանում է: «Ազգը», օգտվելով այդ պատեհ առիթից, հարցրեց նրա կարծիքը երկպալատ խորհրդարան ունենալու վերջերս շրջանառված գաղափարի վերաբերյալ:

- Վերջին շրջանի պատմության ընթացքը նկատի առնելով՝ մտավախություններ, կասկածներ են գոյացել իմ մեջ, թե մարդիկ կան, որոնց ձեռնտու է, որ սփյուռքի եւ հայրենիքի միջեւ այս ձեւի արհեստական հարցեր լինեն միշտ, վեճի նյութեր, որոնք այսօրվա էական մտահոգություններից, պահանջներից չեն բխում: Արհեստական են այդ վեճերը: Առաջին անգամ Լիբանանում լսեցի՝ այդ միջոցին եկա Հայաստան, տեսա, որ այս նյութն արծարծվում է, բորբոքվում է, 15 օր այստեղ եմ: Բայց սփյուռքում բացարձակապես այդ գաղափարը չի արծարծվում, սփյուռքի վերջին հոգան է, որ Հայաստանը երկպալատ լինի, եւ մեջն էլ սփյուռքահայեր լինեն. եւ ես սովորական մարդ չեմ, այսօր էլ ունեմ պարտականություններ, շատ ու շատ մարմինների անդամ եմ, շատ ու շատ մարմինների հետ չվիճում եմ՝ քաղաքական, մշակութային մարդկանց, սփյուռքի գրողների հետ: Տարբեր գաղութներ եւս հաճախ այցելում եմ՝ նման գաղափար ես ոչ մի տեղ չեմ լսել եւ ոչ մի տեղ չեմ քննարկել...

- Եկեք ուրիշ կողմից նայենք այդ գաղափարին՝ տեխնիկական խոչընդոտների, որոնք եւ սահմանադրության մեջ են, եւ ֆինանսական են, եւ թե մտահոգություն կա, թե այլ երկրի քաղաքացին հայոց խորհրդարան գալով արդյո՞ք տվյալ երկրի լոբբիինգը չի իրականացնի (ոչ թե բոլորին ենք կասկածում, այլ այդպիսի մարդիկ կարող են լինել):

Գաղափարն ավելի դրական բաներ ունի իր մեջ, թե խոչընդոտներ:

- Եթե հարցն ըստ էության քննարկենք՝ տարբեր երեսներ ունի հարցն իրոք. առաջինն օրենսդրական (սահմանադրական) մասն է: Բնական է, որ եթե հայրենի խորհրդարանը պետք է դառնա երկպալատ՝ սահմանադրական փոփոխություններ պետք է արվեն, սահմանադրության մեջ պիտի ամրապնդվի, որ սփյուռքահայերը սահմանադրության մաս պիտի կազմեն: Մեր առջեւ կա պառլամենտի ընտրություն եկող տարի՝ եթե այս ընտրություններն ըստ այդ գաղափարի պիտի կատարվեն՝ պետք է մինչեւ 1 տարվա մեջ սահմանադրական փոփոխություններ կատարվեն եւ հանրաքվեի դրվեն: Եթե գաղափարը շատ ավելի հետոյի համար է նետված, ուրեմն անժամանակ խոսակցություն է:

Ասենք՝ ընդունվեց երկպալատ պառլամենտի գաղափարը, էստեղ կան հակասական խնդիրներ. եթե սփյուռքահայը նախագահի հրամանագրով ստանա Հայաստանի քաղաքացիություն, պիտի գա 10 տարի Հայաստանում ապրի, որպեսզի քվեարկելու իրավունք ունենա: Հիմա մենք մի նոր իրավունք ենք բացում՝ կարող են սփյուռքահայերը Հայաստանի քաղաքացի չլինելով դառնալ ծերակույտի (սենատ) անդամ՝ օտար քաղաքացին պետք է դառնա ծերակույտի անդամ, ի՞նչ սկզբունքների հիման վրա՝ եթե սա սահմանադրությամբ չամրապնդվի եւ օրենքներով չկանոնակարգվի:

Եթե անգամ այդ պրոբլեմները մի ձեւով օրենսդրորեն լուծվեցին, ո՞նց պիտի կատարվեն սփյուռքում այս ընտրությունները: Հայաստանում հստակ է՝ կա ընտրական տեղամաս, կա անձնագիր, ու դեռ մարդիկ այս դեպքում են առարկում, որ կան խախտումներ, հետընտրական բողոքներ միշտ կան: Սփյուռքում ո՞վ ունի իրավունք քվեարկելու, ի՞նչ ընտրական տեղամասում՝ իր պատգամավորին ընտրելիս: Սփյուռքում մարդիկ տվյալ երկրի անձնագիրն ունեն, որի մեջ նրա ազգային պատկանելությունը նշված չէ, այսինքն՝ շատ կան մարդիկ, որոնց ազգանունը յան-ով չի վերջանում, հայերեն էլ չգիտեն, բայց գալու են ասեն՝ հայ են եւ ուզում են քվեարկել, ո՞նց են նրա ազգային պատկանելությունը հաստատելու: Այսինքն՝ ընտրությունների արդյունքը կասկածելի կարող է լինել, խոսք է գնում ընտրովի մարդկանց մասին, ո՞վ պետք է ընտրի նրանց:

Ֆինանսական հարցերը կարող են դեռ լուծվել ինքնաֆինանսավորմամբ, որը, սակայն, ընտրության տրամաբանության մեջ չի մտնում ի վերջո՝ ընտրված մարդը պարտավոր չէ ինքն իր ծախսը հոգալու: Մեզ տրված գաղափարի ժխտական կողմերից մեկն էլ այն է, որ մեզ քննադատում են, թե սփյուռքն անցած 60-70 տարում ներքին վիճաբանություններով, երբեմն պայքարներով է անցած: Գիշտ է, սա իր առողջ մասն էլ ունի՝ միշտ պայքարը մրցակցության դուռ է բացել, եւ միշտ միությունները, կուսակցությունները մրցել են իրար հետ, եւ սա պատճառ է եղել, որ կենսունակ մնան գաղութները: Հիմա, երբ մենք ասում ենք, թե պետք է ընդհանուր գաղափարների շուրջը միասնականանանք,

միանալու և պատմության ես մեր վեճերը հետև թողնենք՝ ընտրությունը նշանակում է պայքար, սփյուռքահայությանը դեմ պայքարի մեջ՝ ուն ընտրել, ամեն կազմակերպություն պիտի ուզենա իր թեկնածուն ընտրվի. սա ընտրության նորմալ տրամաբանությունն է, մի 15 թեկնածու որ լինի տվյալ համայնքից՝ ընտրություն պիտի չանե՞ս, ուրեմն միացրեցի՞ր, թե՞ պառակտեցիր սփյուռքն այդպիսով: Ինքնաբերաբար պառակտեցիր: Սփյուռքի խնդիրները բարձրացնելու համար, այդպիսով, ներկայացուցչական խորհրդաժողովներն ավելի հարմար են՝ դրա համար ոչ ընտրապայքար կլինի, ոչ պառակտում:

Այս բոլորը շրջանցելու ձեռք կա. Հայաստանի պառլամենտը երկպալատ պետք է լինի, թե միապալատ՝ դա պետք է որոշի Հայաստանի ժողովուրդը, սա իր պառլամենտն է, ինքը կորոշի, թե այդ պառլամենտում պե՞տք է լինեն սփյուռքահայեր, թե՞ պետք է չլինեն: Կարելի է ժողովրդին հարցնել, գործող քաղաքական ուժերին հարցնել, հանրաքվե կատարել՝ վերջին խոսքը կատարողն է Հայաստանի ժողովրդին՝ երկպալատ պառլամենտի վերաբերմամբ: Սակայն կան հարցեր, որոնք համազգային են՝ Ղարաբաղի հարցը, Ցեղասպանության ճանաչման հարցը, Հայաստանի տնտեսական բարվոքության հարցը, երբ որ սփյուռքահայը ասոցցնով նախանձախնդիր է եւ հետաքրքրվում է, Հայաստանը բոլորիս հայրենիքն է: Սփյուռքում հայապահպանության հարցը կազմակերպելը նույնքան Հայաստանի ժողովրդի եւ իշխանությունների հոգսն է եւ պետք է լինի, սրանք ընդհանրական հարցեր են:

-Իսկ ընդհանրապես սփյուռքահայ պատգամավորներով խորհրդարան ունենալու գաղափարը մոտակա 10 տարիներին իրականանալի՞ է:

- Ես գաղափարը գտնում եմ ժխտական, ոչ 10 տարի, ոչ էլ 50 տարի՝ եթե չեն համոզված այդ գաղափարին՝ չլինի ավելի լավ է: Ընդհանրապես՝ ես դեմ եմ այս գաղափարին. ո՞վ է սփյուռքահայը: ԱՄՆ-ում եւ Ռուսաստանում շատ Հայաստանի քաղաքացիներ կան, որոնք հիմա երկքաղաքացիության իրավունք ունեն՝ թե Հայաստանի քաղաքացի, եւ թե տվյալ երկրի: Այդ մարդը սովորական Հայաստանի ընտրություններին կարող է մասնակցել, դրա իրավունքն ունի, մի հատ էլ որպես սփյուռքահայ ծերակույտի ընտրությամբ պետք է մասնակցի, երկու անգամ պետք է մասնակցի: Հայաստան ապրած մարդը այդ ընտրության արդյունքի վրա ազդել չկարողանա՞, իսկ նա, որ լքել է Հայաստանը՝ երկու ընտրության պիտի մասնակցի: Հայաստանցին, որ այստեղ է ապրում, բանակում է ծառայում, հարկեր եւ տուրքեր է վճարում, երկրի լուծն է քաշում՝ նա իրավունք չունենա, երկրից գնացածը երկու իրավունք ունենա՞, ո՞ր է այստեղ արդարությունը: Ընդհակառակը, Հայաստանում մեծացածին պետք է իրավունքներ տալ, ոչ թե՛ սփյուռքում ծնած-մեծացածին Հայաստանը ղեկավարելու իրավունք:

**ԲՐԵ ԲՐԵՐՈՐՅԱՆՆ ԸՄՍԱՋԱՅՆԵԼ Է ՍՏԱՆՉՆԵԼ ՄԻՍ, ՄԱՍԻՍ, ՆՈՐ ԸԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ**

Մարտ ամսվա կեսերին Հանրային խորհուրդը լսումներ կիրավիրի «Միս, Մասիս, Նոր Հայաստան» ծրագրի շուրջ: Այսպիսի ընդհանուր համաձայնության եկան Հիս փոքր խորհրդի անդամները փետրվարի 24-ի նիստում՝ հավանություն տալով, որ լսումներին հրավիրվեն նաեւ ՀՀ էկոնոմիկայի, բնապահպանության նախարարները, խոշոր եւ միջին գործարարներ: 400 մլն

դոլարի ներդրում պահանջող այս ծրագրով նախատեսված է Հայաստանում լճափնյա հանգստավայրեր կազմակերպել՝ Եղվարդի ջրամբարից մինչեւ խաղատուն, զվարճանքի եւ հանգստի, մարզական այլ շինություններ կառուցել: Հիս նախագահ Վազգեն Մանուկյանը ծանուցեց, որ ներդրումների համար՝ ոչ, բայց կառավարման համար իր համաձայնությունն է տվել Քըրք Քըրքոյանը ( MGM Mirage ընկերություն): Գործընթացը հրապարակային դարձնելու եւ ծրագրի շուրջ բաց քննարկումներ կազմակերպելու խնդրանքով Հանրային խորհրդին են դիմել ծրագրի հեղինակները:

Հիս փոքր խորհրդի նիստում քննարկված մյուս հարցերին առավել մանրամասն ավելի ուշ կարող եք ծանոթանալ Հիս պաշտոնական կայք էջում. <http://www.publiccouncil.am>

Հանրային խորհրդի տեղեկատվություն, 24,փետրվար, 2011թ.

**Մշակույթ**

**ԱՅՎԱԶՈՎՍՎՈՒ ԳԼՈՒԽԳՈՐԾՈՑ ԳՏՆՎԵՑ**



*Արվեստաբան Շահեն Խաչատրյանը գողացված կտավը հայտնաբերեց Մոսկվայի աճուրդատանը*

Շահեն Խաչատրյանի միջոցով հայտնի դարձավ, որ Մոսկվայում գեղարվեստական գործերի «Գեղոս» աճուրդատանը փետրվարի 26-ին վաճառքի է դրվելու Հովհաննես Այվազովսկու «Փոթորիկ ժայռոտ ափերին» (1875 թ., կտավ յուղաներկ, 73x102 սմ) հրաշալի նկարը, որը 1990-ին անհայտ պայմաններում գողացվել էր Հայկական մշակութային կապերի ընկերության (ԱՕԿՄ) դահլիճից:

Ավելացնենք, որ միջազգային աճուրդային տներում վերջին տարիներին Այվազովսկու նկարները գնահատվել են վաճառվել են 1-2,8 մլն ԱՄՆ դոլար...

**ՆՈՐՋՈՒՂԱՅԵՑԻ ԲԱՐԵԳՈՐԾ ԱՎՈՐՈՎՐԱՆՆԻՍՅԱՆԻ ՆՈՐ ՆԿԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՍ**

Նոր Ջուղայում մի քանի տասնամյակ առաջ տնային աճուրդի դրված մեծաքանակ հայերեն ձեռագրերը, վավերագրերն ու հնատիպ գրքերը ձեռք բերած հայ հավաքորդներից ոչ բոլորը դրանք նվիրաբերեցին հայաստանյան հայագիտական օջախներին, ցավոք,

եղան մարդիկ, որ դրանք վաճառեցին օտար հաստատություններին, անհատներին՝ մեկընդմիջտ այդ ամենը դարձնելով նրանց սեփականությունը: Բարեբախտաբար, հավաքորդների մեջ եղան նաև հայրենամուտ մարդիկ, ինչպես Ավո Հովհաննիսյանը, որն իր կարողություններով ժողոված հավաքածուով հայոց հոգեւոր գանձարանը հարստացրեց բազմաբյուր նյութերով, որոնց թվում են Մատենադարանին մվիրաբերած 65 ձեռագրերն ու բազում վավերագրերը, հնատիպ ու նոր գրականության նմուշները: Նրա մվիրատվություններով հարստացել են նաև Մայր Աթոռ Սբ Էջմիածինը, Հայաստանի պատմության թանգարանը, Ազգային եւ Խնկո Ապրի անվան գրադարանները, «Հայաստան» համահայկական հիմնադրամը, Ե. Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանը եւ այլք:



Իր 40-ամյա գործունեության մասին խոսելիս նա առաջինը արտաբերում է Մատենադարանի անունը, որովհետև հայրենիքի հետ կապը խորացել է Մատենադարանից ստացած հոգեւոր հզոր ազդակներից, հատկապես Մատենադարանի նախկին տնօրեն Լեւոն Խաչիկյանից ստացած շնորհակալական նամակից, որում արտահայտված խորունկ մտքերն իրեն ուղեկցել են կյանքի ողջ ընթացքում: Մատենադարանի հետ կապը տարեցտարի ավելի է սերտացել. Սեն Արեւշատյանից ստացել է առաջին հուշամեդալը, իսկ Հրաչյա Թամրազյանից օրերս ստացավ երկրորդ մեդալը՝ իր մեծ մվիրումի եւ ազնվագույն գործի համար:

Նույնիսկ իր մեծաման օրը Ավո Հովհաննիսյանը դատարկաձեռն չէր եկել Մատենադարան, իր հետ բերել էր մեկ ձեռագիր՝ «Պատմութիւն կայսերն Դիոկղատիանոսի եւ եօթն իմաստնասիրաց» ժողովածուն (19-րդ դ., Թավրիզ) եւ Գր. Նարեկացու «Մատյան ողբերգության» հնատիպ գիրքը՝ հրատարակված 1783 թվականին:

## ՊԱՐՍԿԵՐԵՆ ԶԵՆԱԳՐԵՐԻ ՈՒ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ ԵՐԿՐՈՂՔ ՑՈՒՑԱՂՈՒԹՅՈՒՆԸ

Մաշտոցի անվան Մատենադարանի պարսկերեն հավաքածուի հիմքում Մայր Աթոռ Սբ Էջմիածնի գրադարանի նյութերն են, որոնք հետագայում համալրվել են Մոսկվայի Լազարյան ճեմարանի եւ Երեւանի հանրային գրադարանի ձեռագրերով, ինչպես նաև հայ բարերարների, հատկապես Հարություն Հազարյանի մվիրատվություններով:


Մատենադարանում այսօր պահվում են XIV-XIX դարերի պարսկերեն 470 ձեռագիր եւ մոտ 1500 վավերագիր: Դրանց մի մասն առաջին անգամ ցուցադրվեց երկու տարի առաջ եւ մեծ հետաքրքրություն առաջացրեց, ինչն էլ խորհելու առիթ տվեց կազմակերպելու երկրորդ ցուցադրությունը՝ համագործակցությամբ Մատենադարանի եւ Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան մշակույթի կենտրոնի: Ներկայացված ավելի քան 50 ձեռագրերը բովանդակային տարբեր ընդգրկում ունեն՝ կրոնական, պատմական, խրատական, բանաստեղծական, բժշկական: Ինչպես նախորդ, այնպես էլ այս ցուցադրության մեջ տեղ են գտել մատանու տուփի մեջ պահվող Ղուրանը, Նիզամու «Խամսե», Սաադի «Խրատ թագավորներին», Ֆիրդուսի «Շահնամե» եւ այլ արժեքավոր ձեռագրեր:



Մատենադարանի շուրջ 3000 արաբատառ ձեռագրերի ֆոնդի մաս կազմող պարսկերեն ձեռագրերը բովանդակում են իրանական մշակույթի ու գիտության ամենատարբեր բնագավառներին վերաբերող գործեր: Կան հազվագյուտ ու եզակի ձեռագրեր, որոնք աչքի են ընկնում իրենց թե՛ գիտական, և թե՛ պատմա-մշակութային բարձր արժեքով: Բացի սրանից, Մատենադարանի արխիվային ֆոնդերում պահվում են շուրջ 300 պարսկերեն հրովարտակներ՝ տրված Կարա-Կոյունլու, աղ-Կոյունլու թուրքմեն տիրակալների, Սեֆյան ու Ղաջար շահերի կողմից հայոց վանքերին, ազնվականներին ու համայնքներին՝ ի պաշտպանություն նրանց իրավունքների:

Պարսկերեն ձեռագրերի մեծ մասն ուսումնասիրվել ու հրատարակվել է «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» շարքի հինգ հատորներում: Առաջին երեք հատորները հրատարակվել են դեռ նախորդ դարի 50-60-ականներին Մատենադարանի նախկին աշխատակից պրոֆ. Հակոբ Փափազյանի աշխատասիրությամբ, իսկ նույն շարքի վերջին երկու հատորները ներկայիս ավագ գիտաշխատող Քրիստինե Կոստիկյանի ջանքերով: Վերջինս հրատարակության է պատրաստում նաև Մատենադարանի պարսկերեն ձեռագրացուցակը, որը թույլ կտա ամբողջական պատկերացում կազմել պարսկերեն ձեռագրերի բովանդակության մասին:

ԳՈՒՐԳԵՆ ՊՈՂՈՍԻ ՍԱՐԳՍՅԱՆ



(1918-2011)

2011 թվականի փետրվարի 20-ին, 93 տարեկան հասակում, Լոս Անջելես քաղաքում իր մահկանացուն կնքեց բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, հայրենանվեր գործիչ Գուրգեն Պողոսի Սարգսյանը:

Գուրգեն Պողոսի Սարգսյանը ծնվել է 1918 թվականին Պարսկաստանի Սավրա գյուղում՝ Մեծ եղեռնը վերապրած եւ գաղթի ճանապարհին երեք զավակներին կորցրած Պողոս եւ Խաթուն Սարգսյանների ընտանիքում: Նույն՝ 1918 թվականին Սարգսյանների ընտանիքը Պարսկաստան գաղթած վասպուրականցիների հետ տեղափոխվում է Իրաք, հաստատվում Բաքուբա գյուղաքաղաքի բնակավայրերից մեկում: Գուրգենը գրաճանաչություն է սովորում տեղի հայկական եկեղեցուն կից բացված նախակրթարանում, այնուհետեւ սովորում է Բաղդադի ամերիկյան միջնակարգ դպրոցում, որն ավարտելուց հետո աշխատանքի է անցնում անգլիական նավթային ընկերություններում:

1946 թվականին Գուրգեն Սարգսյանը հայրենադարձների առաջին շարքերում ներգաղթում է Խորհրդային Հայաստան: Նա իր հետ հայրենիք է բերում մորը եւ երկու եղբայրներին: Երեւանում Գուրգենը սովորում է պետական համալսարանի հայկական բանասիրական ֆակուլտետում, որն ավարտելուց հետո աշխատանքի է անցնում՝ որպես հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչ Երեւանի միջնակարգ դպրոցներում, իսկ 1961 թվականից՝ որպես անգլերեն լեզվի դասախոս պոլիտեխնիկական ինստիտուտում: Այստեղ էլ պաշտպանում է գիտական թեկնածուական թեզ եւ ստանում դոցենտի գիտական կոչում:

Հանգամանքների բերումով Գուրգեն Սարգսյանը 1991 թվականին մշտական բնակության է մեկնում Սիացյալ Նահանգներ եւ հաստատվում դստեր՝ Ծովինարի ընտանիքի կողքին:

Շուրջ քսան տարի Գուրգեն Պողոսյանը ապրում է Հոլիվուդում. նա ոչ թե ծերունական հանգիստ էր վայելում, այլ ամիսնոց աշխատում էր եւ հայրենանվեր գործեր ձեռնարկում: 1973 թվականին լույս էր տեսել նրա «Մարաթոնյան վագր» աշխատությունը, իսկ 1993 թվականին լույս է տեսնում «Օլիմպիական խաղերի ատլետիկական մրցումների պատմությունը» գիրքը: 1995

թվականին Գուրգեն Սարգսյանի թարգմանությանը հրատարակվում է Հենրի Գեյթսի «Հոշոտված Հայաստան» (կամ «Հոգիների աճուրդը») վեպը: 1996 թվականին նա հրատարակում է «Անգլերենից փոխառնված բառերն ու տերմինները արդի հայերենում» աշխատությունը, 1999-ին լույս է տեսնում «Նոր արեւապաշտներ» պատմվածքների ժողովածուն, իսկ 2002 թվականին «Ուղղագրության բարեփոխությունը պատմական անհրաժեշտություն էր» ուսումնասիրությունը: Նրա թարգմանությամբ 2003 թվականին լույս է տեսնում Էդուարդ Լիթլի «Հայկական հարցը» գրքուկը, նույն թվականին հրատարակվում է «Գրական հուշեր» գրաքննադատական, իսկ 2005 թվականին «Հին ու նոր ցավեր» պատմվածքների ծողովածուները:

ՎԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՃԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՑ

Պրոֆ. Ծ. Պ. Աղայան

Անդրկովկասի ժողովուրդների պատմական բախտը նոր ընթացք ստացավ XIX դ. սկզբին, երբ 1801 թ, հրովարտակով Կրաստանը և նրա հետ Հայաստանի հյուսիսային շրջանները միացվեցին Ռուսաստանին: 1813 թ. Գյուլիստանի պայմանագրով Ռուսաստանին միացվեց նաև Ադրբեջանը:

Հայ ժողովրդի համար բախտորոշ պատմական երևույթ էր Թուրքմենչայի պայմանագրով (1828) Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին որպես ռուսական զենքի ձեռք բերած հաղթանակի արդյունք: Հայաստանի տնտեսական ու մշակութային կյանքը, չնայած ցարիզմի ռեակցիոն կարգերին, համեմատաբար ավելի արագ սկսեց զարգանալ: Կարևոր նշանակություն ունեցավ նաև Պարսկաստանից 40 հազար և Ադրիանապոլսի դաշնագրի (1829 թ.) համաձայն Արևմտյան Հայաստանից 90 հազար հայերի ներգաղթն Արևելյան Հայաստան, որտեղ կարճ ժամանակում հայ բնակչությունն սկսեց արագորեն աճել:

Այդ պատմական իրադարձության մասին Հովհաննես Թումանյանը գրել է. «Անցյալ դարի սկզբից Ռուսաստանը մտավ Կովկասի սահմաններն ու սկսեց իր պարսկական պատերազմները: Էդ պատերազմները թե՛ Գուգարք ու Սյունիք, թե՛ Շիրակ ու Արարատյան երկրում՝ ազգային սրբազան պատերազմի նշանակություն ունեին հայերի համար: Վճռվում էր պարսկա-հայկական հարցը»:

Թուրքական հալածանքները ավելի դաժան ու անտանելի դարձան 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, պատերազմ, երբ արևմտահայերը ևս բացեիքաց հանդես եկան որպես Ռուսաստանի կողմնակիցներ, ամեն կերպ օգնելով ռուսական բանակին: Արևմտահայերի համար լավագույն օրինակ էր ռուսական զենքի ուժով Արևելյան Հայաստանի ազատագրումը պարսկական տիրապետությունից: Ինքնին հասկանալի է, որ նրանք նոր հույսով ու հավատով պետք է ապավինեին իրենց ազատագրության այդ հզոր ուժին: Հատկապես այն բանից հետո, երբ Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի միջամտությամբ Թուրքիան ստիպված եղավ ճանաչել սուլթանի դեմ զինված ու երկարատև պայքար մղող Հունաստանի անկախությունը, հայերը, բնականաբար, եկան այն




համոզման, որ նույն կարգով իրենք ևս կկարողանան ազատություն ձեռք բերել, եթե միատեղեն ազգային ջանքերը, միասնական զինված պայքար մղեն, եւ եթե տերությունները պաշտպանեն իրենց:

Տարական Ռուսաստանի համար կարևոր նշանակություն ունեցավ Թուրքիայի հետ 1833 թ. կնքված դաշնագիրը, որով Ռուսաստանի ազդեցությունը տարածվում էր նեղուցների վրա և նորից էր ստանձնում քրիստոնյա փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը: Անդրկովկասը Ռուսաստանին միացվելուց հետո Անգլիան և Ֆրանսիան ավելի մեծ չափով նպաստեցին Թուրքիայի հզորացմանը, որպեսզի այն պատենշ դարձնեն Ռուսաստանի՝ դեպի Մերձավոր Արևելք առաջխաղացման դեմ:

Սակայն այդ չէր փրկի իրավիճակը: XIX գ. առաջին քառորդում Թուրքիան կորցնում էր իր հզորությունը և դառնում էր մեծ տերությունների դիվանագիտական գործարքների ասպարեզ: Երկրի ներսում անկախության ձգտող քուրդ և թուրք ավատատերերի ապստամբություններն ու ռազմական ընդհարումները դարձել էին հաճախ կրկնվող երևույթներ: Ավատատերերից շատերը հրաժարվում էին կատարել իրենց պարտավորությունները, խզում էին կապերը Բարձր Դռնից: Ղա ավելի էր ծանրացնում քրիստոնյա ժողովուրդների վիճակը: Սուլթանը, չկարողանալով հաշվեհարդար տեսնել ըմբոստ ցեղապետերի հետ, ավելացնում էր քրիստոնյաներից զանձվող հարկերը, բարձրացնում մաքսերը, անելանելի վիճակ ստեղծում առևտրականների ու արհեստավորների համար: Իրենց հերթին քրիստոնյաներից հարկեր էին զանձում նաև քուրդ և թուրք ցեղապետներն ու ավատատերերը: Անլուր հալածանքներից և հարստահարությունից ազատվելու միակ ելքը ազատագրական պայքարի դրոշ պարզելն էր: Թուրքական բռնապետության դեմ պայքարի ելան հույները, բուլղարները, սերբերը, ռումինացիները, հայերը, արաբները և բազմաթիվ այլ ժողովուրդներ:

Այս շրջանի հայ ազգային-ազատագրական շարժման ծաղկեպսակը Ձեյթունի հերոսական մարտերն էին և նրանց գագաթնակետը հանդիսացող 1862 թ. ապստամբությունը: 1840-1860-ական թվականներին զեյթունցիների մղած ազատագրական պայքարը, պայմանավորված լինելով սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակով, միաժամանակ վկայում էր այն մասին, որ չնայած թուրքական ծանր բռնություններին, հայ ժողովրդի ազատագրական ձգտումները չէին մարել և միտում էին հաղթանակի հասնել հերոսական ջանքերի, կյանքի ու մահու գնով:

Շար. 6



Խարված

Հանիկ Բաղդասարյան

## Սոհեր

### Մեր անցած ճամբան

*Թ. Ղարախանյան Միրակցի*

Երբ դեռ շվարած այս ու այն կողմ էինք նայում, լավեց բարձրախոսի ձայնը եւ նշանակված սպա՝ «**Բորեյրի**»-ն ձեռքի բարձրախոսը բերանին մոտեցրեց կարդալով իր վերջին հայտարարությունը:

« **ՌՈՒՍՍԱՆ ԶՈՐՔ-Ի** առաջին շրջանի ընտրյալներ՝ Իմացեք՝ որ մեծն թագավորի Սպիտակ Հեղափոխության նպատակները մեր հայրենիքի զարգացման եւ բարգավաճման համար է, ընտրվել եք իբրև Ուսման Զօրքի առաջին զինվորներ, պիտի սրտով ու հոգով մվիրվեք այս սրբազան նպատակին եւ ազնվորեն ծառայեք մեր ժողովրդին ձեր նախընտրած գյուղերում... կրթեք եւ դաստիարակեք փոքրիկներին եւ ուղեկցեք մեծերին, այդպիսով կատարելու եք մեր Թագավորի նպատակները իրականացնելու փափագը: Եւ իմացեք, որ այդ նպատակների համար ովքեր որ ձեզ խանգարեն կամ որեւէ դժվարություն ստեղծեն, իսկույն կապվեք ձեր նշանակված ղեկավարի հետ, որի հետ միասին հարցերը լուծեք: Դուք պիտի գյուղացի երեխաներին գրել կարդալ, խաղալ ու սպորտ սովորեցնեք եւ դեպի լույս աշխարհ տանեք, եթե դպրոց չունեն, գյուղացիներին համոզեք ձեր հետ ձեռք-ձեռքի տան եւ միասին դպրոց կառուցեք, ձեզ կը-սովորեցնեն ինչպես քարոզեք գյուղացի մարդկանց որ իրենց առողջ պահեն եւ իրենց քաջալերեք աղբյուրների եւ քարիզների ջրերից խմեն եւ կերակրեղեն պատրաստեն եւ գետերից ջուր չխմեն, գյուղի փողոցները եւ իրենց տները մաքուր պահեն: Լսեք, լավ լսեք, գյուղացու հետ ազնիվ եղեք, իրենց հետ բարի վերաբերմունք ունեցեք: Այս ամէնը ձեզ սովորեցնելու են զինվորանոցներում: Հիշեք եւ իմացեք որ թագավորի կողմից հրաման է տրված ծայրից-ծայր մեր ազիզ երկրի բոլոր նախարարություններին որ ձեր նման **ՌՈՒՍՍԱՆ ԶՈՐՔ-Ի** զին-ծառայողների հետ ուղղակի համագործակցություն ունենան եւ դժվարությունները հաղթահարեն:

**Եւ այս հրաման է: Կեցցե մեր ամենասիրված թագավորը.** հուռռռռռռռռ...: Հիմա 3 անգամ հուռա ասեք... հուռա... հուռա...: Եւ սպա «**Բորեյրի**»-ն հուռաներից հետոյ շարունակեց...

Ուրեմն 4-5 ժամ միջոց ունեք ձեր անձնական իրերը վերցնելու: Այս զինվորանոցը գտնվում է Անվազ քաղաքի ԶԼՐՈՒՆ կամրջի մտակայքում. օրը երկար է եւ դեռ ահագին լույս կա մինչեւ մթնելը...»

Շարունակելի

### Իր մահկանացուն կնքեց Իրանի աստղաֆիզիկայի մայր Ալեհուշ Տերյանը

Մարտի 5-ի առավոտյան 90 տարեկան հասակում իր մահկանացուն է կնքել աստղագետ-ֆիզիկոս դոկտ. Ալեհուշ Տերյանը՝ Իրանի առաջին կին ֆիզիկոս-դասախոս, Թեհրանի Պետական համալսարանի Գեոֆիզիկայի եւ աստղաֆիզիկայի հաստատության հիմնադիր: Կին, որին Իր անուն կոչում են «Իրանի արեգակնային մայր»:  
Նա այն բախտավորներից էր, որ իր կենդանության օրոք արժանացավ թե՛ Իրանի պետական այրերի, թե՛ Հայաստանի, եւ թե՛ իրանահայ ազգային մարմինների գնահատանքին:

